

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ

Ես ապրում էի... կեանքի երազը
Այրող իմ սրտում սլանում էի
Հեռու և հեռու... Ես դիտում էի...
Եւ դրկում էի ողջ տիեզերքը
Անեզր, անծայր... և ժպտում էի.
Մարդկային մտքի տենչերը բոլոր
— Դարերով ապրած, դարեր ամբարուած
Եռում էր իմ մէջ... իսկ ես մի հզօր,
Անսահման հզօր և կարող Աստուած
Շօշափում էի այրող կարիքի
— Անսկիզբ կեանքի յոյզերը բոլոր.
Եւ ողջը, ողջը ինձ ստիպում էր
Միայն ստեղծել... և ստեղծեցի:

Բայց անցան դարեր... Օ՜ ես սարսեցի
Արարածների, արնոտ սրտերի,
Այլանդակ կրքի, նենգ ոգիների,
Եւ անէծքների դաժան պատկերից...

Ուզեցի նորից

Մի չնչին խօսքով ողջը խորտակել,
Եւ նորից... նորից, մի նոր սկզբից
Մի հիանալի սուրբ կեանք ստեղծել,
Ուր և չլինէր— ոչ անէծք, ոչ փառք,
Ոչ ծառայ, ոչ տէր, ոչ վիշտ, ոչ զրկանք,
Ոչ երանութիւն, ոչ բաղդ, ոչ դժբաղդ,
Մի խօսքով անբիծ, անարատ մի կեանք,
Ողջը միմիայն— յոյս, հաւատ և սէր...

Բայց յանկարծ սարսեց դժոխքը ահեղ,
Պաւարը եռաց, փրփրաց ուժգին,
Եւ չարն ու բարին, ողջը միատեղ
Կանգնեցին իսկոյն աչքիս առաջին:

—Ասան Արարիչ—որ կաս յաւիտեան,
Որ յաւիտենից ազատ, անսահման
Իշխում ես միայն... Խնչու ես ուզում
Կեանքը անիծել, ինչո՞ւ խորտակել,
Ինչո՞ւ ստեղծել...

Ձէ՞ որ աշխարհը, ողջ արարածներ,
Որ անիծում են դեռ պատճառ ունին...
Բայց դու... Օ՜ նայիր... տես որքան սրտեր,
Քաւար ստրուկներ դեռ պաշտում են քեզ...
Տես որքան խոնարհ, և ապուշ և հեզ
Թոյլ արարածներ

Դեռ փառք են տալիս... և այն ցուրտ կեանքի,
Ճաւ ու զրկանքի, այն այրող մտքի
Հէզ թշուառները, որոնք օրն իբրեւ
Անյոգ, անդադրում քրտինք են թափում
Եւ աղօթք կարդում...

Իսկ դու ինչո՞ւ ես այդպէս վշտանում,
Անէծքն ատելով, ինքդ անիծում:
Այդպէս, անկասկած ով բարի Աստուած
Անէծք... ու անէծք. բայց զուր է հնչում
Այդ բառը թունոտ-ողջ տիեզերքում:
Ինչ կայ, թող մնայ... յաւիտեան մնայ...

Սուրբ է բոլորը...

Անվերջ բոլորը:

—Սուրբ է, երբ ոսկի արև է ծագում
Աշխարհի վրայ ամեն առաւօտ.
Սուրբ է լուսնեակը—խաւար եթերքում.
Երբ բորբոքում է այն արօտ կարօտ
Մատաղ յոյսերով, սիրող սրտերի
Եւ խանդ ու երազ... սուրբ է կապուտակ
Աստղոտ երկինքը, երբ հազար հազար
Փայլուն աչերով նայում է յատակ,
Լուռ ծաւալուելով—անհուն ջրերի
Ովկիանոսների վճիտ հայելում

—Անվերջ, անդադրում:

Սուրբ է անդրանիկ շողը վարդագոյն,
Մշուշ զապաթին ծերուկ լեռների.
Սուրբ է ստուերը—այն ախորժ դժգոյն
Այնքան զովաբեր-սահող ամպերի:
Սուրբ է անտառի օրօրը մեղմիկ,

Եւ ստուերախիտ դարաւոր կաղնին,
Որ հով է սփռում անհուն երջանիկ
Բնութեան գրկում լուռ երազողին:
Սուրբ է և կանաչ և արօտ և դաշտ:
Ուր հազարերանգ ծաղիկներ կան շատ.
Ուր Թռչունների անհոգ ծլւլոց,
Արարածների բառաչ ու մայուն,
Մեղմիկ զեփիւռի անուշ սլալոց
Ուր կեանքն է եռում յոյսերով անհուն:

Սուրբ է և մարդը յոյգերով արբած.
Երբ ոյժ է մղում խաւարի ընդդէմ,
Երբ յոյսը իրեն վրայ անկասկած
Դժոխքի գրկում—տենչում է Եդեմ.
Երբ լոկ իր սրտում, իր հոգու խորքում
Պտրում է և կեանք և սէր և աշխարհ,
Եւ բիւր տենչերին մի դրախտ անծայր:

Մինչ սուրբ է մերիկ, և կայծ և որոտ,
Որ խափանում է երկիւղը կարօտ.
Սուրբ է և կռուի այն ոյժը հզօր,
Որ խորտակում է—դաժան և անզօր
Արարածներին,—որոնք անիմաստ
Զուր տեղ են բռնում—ընտրած շարքերում,
Որոնք դարերով—ազատ ու պատրաստ
Կեանք են վայելում, կեանքն ապականում:

Օ՜ վերջապէս, սուրբ է բոլորը,
Ինչ որ շնչում է, ապրում է մի օր,
Այն այն բոլորը, անվերջ բոլորը,
Որոնք ապրելու տենչ ունին հզօր...
Թող նորից եռայ տարերքն աշխարհի,
Եւ նորից ապրի ինչ կայ—Թող մնայ...
Եւ. Թող բոլորը—քնքոյշ ու վայրի
Երազեն անվերջ—յոյս ու ապագայ:

—Եւ ես ասացի. այո՛, Թող մնայ,
Եւ ողջը աճի, ազատ բազմանայ: